# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 99
*25 օգոստոսի 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 130-135 որոշումները:

**ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

17 08 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 130

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0098-041-7 ԾԱԾԿԱԳՐԻ, ՀԱՍՄԻԿ ՀՐԱՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ (ՀԱՄԱՁԱՅՆ 15.02.2001Թ. ՏՐՎԱԾ N 0275411 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԲՆԱԿԱՐԱՆԻ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

## ՈՐՈՇԵՑԻ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0098-041-7 ծածկագրի, Հասմիկ Հրանտի Սարգսյանին պատկանող բնակարանի համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ.Գուգար ք 1 փողոց շենք 3 բնակ.7

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

07300669

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» օգոստոսի 2017 թվականի N – 131

**06-031-0023-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԾՎԻԿ ԱՂԱՍՈՒ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Ա. Պողոսյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը,Մել և Միլ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով,ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ.Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել **06-031-0023-0009** ծածկագրի տակ գտնվող 0,05677հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1996-2000թթ. կառուցված 22.13ք.մ. մակերեսով անասնագոմի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Արծվիկ Աղասու Պողոսյանի /ծնվ. 1967թ./ սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված 0.05հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0.00677հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Արծվիկ Աղասու Պողոսյանի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Հողամասում առկա է ինքնակամ 2004թ. կառուցված 98.68քմ մակերեսով բնակելի տուն:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ. Գուգարք 2 փողոց 3նրբ թիվ 2:
7. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Աշուղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

23 08 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No - 132

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0017-0056 ԾԱԾԿԱԳՐԻ, ՍՈՒՐԻԿ ԱՐԱՐԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ (ՀԱՄԱՁԱՅՆ 15.10.2003Թ. ՏՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԻՔԻ N 1742843 ՎԿԱՅԱԿԱՆԻ) ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ`*

ՈՐՈՇԵՑԻ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0017-0056 ծածկագրի, Սուրիկ Արարատի Հակոբյանին պատկանող տնատիրության համար հաստատել հետևյալ փոստային հասցեն`
գ.Գուգար ք Կոտեջային 4-րդ փողոց տուն 18/2

Գուգարքի համայնքապետ` Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

24 08. 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 133

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0066-0020 ԾԱԾԿԱԳՐԻ, ԱՐԱՄ ՌՈՒԲԵՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ (ՀԱՄԱՁԱՅՆ 20.01.2010Թ. ՏՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ N 1942102 ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով. ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

ՈՐՈՇԵՑԻ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0066-0020 ծածկագրի, Արամ Ռուբենի Առաքելյանի ընտանիքին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ. Գուգարք 2 փողոց տուն 43

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

24.08.2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 134

06-031-0043-0147 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի «Կադաստրային գործերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» 01.06.2010թ. թիվ 186 Ն հրամանով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 Ն որոշումով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով*

## ՈՐՈՇԵՑԻ

1. Վերականգնել Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0043-0147 ծածկագրի տակ գտնվող 0.11624հա հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և ճանաչել 0.1162հա մակերեսով ընդհանուր օգտագործման (երկու տնատիրությունների համար) Սասուն Գրիգորյանի բաժնեմասային սեփականության իրավունքը:
2. 0.11624հա հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և (կամ) չի առաջացնում սերվիտուտ;
3. Ճանաչել 06-031-0043-0147 ծածկագրի տակ գտնվող Սասուն Գրիգորյանի բաժնեմասային սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված 29.44քմ մակերեսով բնակելի տան և 11.04քմ մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ Սասուն Սոսիկի Գրիգորյանի (ծնվ. 1975թ.) սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝
   գ. Գուգարք, 9 փողոց, 2/1-1

*Գուգարքի համայնքապետ* — *Ա. ԱՇՈՒՂՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» 08. 2017թ N 135

06-031-0043-0129 ծածկագրի տակ գտնվող տնատիրության նկատմամբ Ջեմմա Անուշավանի Սարգսյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին

Հիմք ընդունելով Ջ. Սարգսյանի դիմումը, 20.02.1984թ տեխնիկական անձնագիրը, Գուգարք համայնքի տնտեսական թիվ 8 գրքի թիվ 694 գրանցման էջից քաղվածքը, հողամասի և շենք շինությունների համար կազմված հատակագծերը, Ղեկավարվելով՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43 հոդվածներով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60 և 64 հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզ Գուգարք համայնքի 06-031-0043-0129 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.10708հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել և վերականգնել Ջեմմա Անուշավանի Սարգսյանի /ծնված 1946թ/ սեփականության իրավունքը:
2. Ճանաչել 06-031-0043-0129 ծածկագրով 0.10708հա հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 2001թ կառուցված 422.76քմ բնակելի տան, 9.14քմ զուգարանի, 0.96քմ հացատան, 12.79քմ կաթսայատան և 24.99քմ մակերեսով պարիսպի նկատմամբ Ջեմմա Անուշավանի Սարգսյանի /ծնված 1946թ/ սեփականության իրավունքը:
3. 2001թ մայիսի 15-ից հետ կառուցված 41.81քմ մակերեսով ավտոտնակը դիտարկել որպես ինքնակամ կառույց:
4. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ. Գուգարք 3 փողոց թիվ 39:
7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Աշուղյան